

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1 Ո՞ր դեպքում է կիրառվում գծիկային գիծը.

- 1) տեսանելի ուրվագծեր պատկերելիս
- 2) անտեսանելի ուրվագծեր պատկերելիս
- 3) առանցքային գծեր պատկերելիս
- 4) չափագծերը պատկերելիս

2 Արտաքեր գծերը և չափագծերը գծվում են.

- 1) բարակ հոծ գծով
- 2) գծիկային գծով
- 3) հիմնական հոծ գծով
- 4) գծակետային գծով

3 Չափաթիվը գրվում է ձախ կողմից, եթե.

- 1) չափագիծը դասավորված է ֆրոնտալ հարթությունում
- 2) չափագիծը դասավորված է հորիզոնական
- 3) չափագիծը դասավորված է ուղղաձիգ
- 4) չափագիծը դասավորված է պրոֆիլային հարթությունում

4 Շառավղի չափաթվի առջև դրվում է.

- 1) D տառը
- 2) K տառը
- 3) M տառը
- 4) R տառը

5 Մեծացման մասշտաբ է.

- 1) 2.5 : 1
- 2) 1 : 2.5
- 3) 1 : 3
- 4) 3 : 1

6 Գծագրական թղթի եզրերից ի՞նչ հեռավորության վրա է գծվում շրջանակը.

- 1) ձախից, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ
- 2) ձախից, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ
- 3) ձախից-20մմ, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ
- 4) ձախից-25մմ, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ

7

Առարկայի մտովի բաժանումն առանձին մասերի անվանում են.

- 1) փոխաձք
- 2) երկրաչափական պատկերի կառուցում
- 3) էսքիզ
- 4) երկրաչափական ձևի վերլուծություն

8

Չուգահեռ պրոյեկտման դեպքում բոլոր պրոյեկցիաները ստացվում են.

- 1) բնական մեծությամբ
- 2) բնականից մեծ
- 3) 90° թեքությամբ
- 4) 45° թեքությամբ

9

Կտրվածք է կոչվում այն պատկերը, որը.

- 1) պարզաբանում է առարկայի ներքին հատույթները
- 2) պարզաբանում է առարկայի ներքին ձևը
- 3) ստացվում է կենտրոնական պրոյեկտումից
- 4) ստացվում է զուգահեռ պրոյեկտումից

10

Կտրվածքներում գծապատումը կատարվում է.

- 1) 30° անկյան տակ
- 2) 45° անկյան տակ
- 3) 60° անկյան տակ
- 4) 90° անկյան տակ

11

Ինչպե՞ս է անցնում կտրող հարթությունը՝ հատակագիծը շինարարական գծագրի վրա ցուցադրելու համար.

- 1) պատուհանագոգերի մակարդակից մի փոքր վերև
- 2) պատուհանագոգի մակարդակով
- 3) առաջին հարկի հատակի մակարդակով
- 4) առաստաղից անմիջապես ներքև

12

Ծառի ո՞ր տեսակը սաղարթավոր չէ.

- 1) կաղնի
- 2) մայրի
- 3) հաճարենի
- 4) հացենի

13 Օտոի բնի հիմնական հատույթները լինում են.

- 1) շառավղային, տանգենցիալ
- 2) լայնական, շառավղային, եզրային
- 3) շառավղային, եզրային
- 4) լայնական, շառավղային, տանգենցիալ

14 Սդոցանյութի ո՞ր տեսակին են անվանում չորսվակ.

- 1) որի լայնությունը և հաստությունը մեծ են 100 մմ-ից
- 2) որի հաստությունը փոքր է 100 մմ-ից, իսկ լայնությունը չի գերազանցում հաստության կրկնապատիկը
- 3) որը ստացվում է գերանը երկայնական ուղղությամբ չորս հավասար մասերի բաժանելով
- 4) որի լայնությունը երկու և ավելի անգամ մեծ է հաստությունից

15 Գործողություն, որի ժամանակ փայտե դետալներին տալիս են համապատասխան ձև, ճշգրիտ չափեր և անհրաժեշտ մաքրություն.

- 1) ռանդում
- 2) սդոցում
- 3) շաղափում
- 4) խարտոցում

16 Մշակված մակերևույթի որակը համարվում է բավարար, եթե.

- 1) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի եզրին
- 2) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և անկյունագծերով, առանց բացակների կիպ հավում է մշակված մակերևույթին
- 3) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի ճակատին
- 4) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և եզրերով, առանց բացակների կիպ հավում է մշակված մակերևույթին

17 Ի՞նչ է շպոնը.

- 1) սալիկներ, որոնք ստացվել են շոգեխաշած և մանրացված փայտի ամենափոքր մանրաթելերի մամլման միջոցով
- 2) սալիկներ, որոնք ստացվել են թեփի, տաշեղների և փայտի փոշուց
- 3) փայտի բարակ շերտ, որը ստացվում է ռանդման կամ ծլեպման միջոցով
- 4) փայտի բարակ շերտ, որը ստացվում է սդոցման կամ թործման միջոցով

18

Ի՞նչ գործիք են օգտագործում նախապատրաստվածքի վրա չափանշման գուգահեռ գծեր քաշելու համար.

- 1) անկյունարդ
- 2) անկյունաքանոն
- 3) կարկին
- 4) խազքաշ

19

Ինչպիսի՞ ձևի ատամներով սղոց են օգտագործում փայտանյութի երկայնական կտրման համար.

- 1) ուղիղ
- 2) մեծ թեքությամբ
- 3) փոքր թեքությամբ
- 4) կոր

20

Ի՞նչ է չափրաստումը.

- 1) սղոցի ատամների սրումն է
- 2) սղոցի ատամների թեքումն է հերթականությամբ տարբեր կողմեր
- 3) սղոցի ատամների ուղղումն է
- 4) սղոցի ատամների գագաթների հավասարեցումն է ուղիղ գծով

21

Ինչպե՞ս են անվանում փայտի վերջնամշակման համար նախատեսված թործիչ գործիքը.

- 1) ռանդա
- 2) ֆուգան
- 3) իզմիր
- 4) նրբառանդա

22

Ի՞նչ է նշվում տեխնոլոգիական քարտում.

- 1) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 2) արտադրանքի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 3) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, չափանշման եղանակները
- 4) փայտանյութի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները

23

Ինչպե՞ս է կոչվում փայտը 45° և 90° անկյան տակ սղոցելու հարմարանքը.

- 1) հենակ
- 2) անկյունասղոցման ուղղորդ
- 3) ռեյսմուս
- 4) անկյունասղոցման արկղ

24

Նախապատրաստվածքի ավելցուկային շերտը, որը կտրող գործիքով պետք է հեռացվի հետագա մշակման ընթացքում, անվանում են.

- 1) էլուստ
- 2) թողվածք
- 3) բազային շերտ
- 4) մշակվող շերտ

25

Տախտակի երկայնական լայն մակերևույթն անվանում են.

- 1) եզրաշերտ
- 2) եզր
- 3) ճակատ
- 4) կող

26

Մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերի ուղղությամբ պետք է լինի ոչ պակաս.

- 1) 15d
- 2) 5d
- 3) 4d
- 4) 10d

27

Ինչո՞վ են պատում տանիքի թիթեղները կոռոզիայից պաշտպանելու համար.

- 1) պղնձով
- 2) երկաթով
- 3) արույրով և ցինկով
- 4) անագով և ցինկով

28

Ի՞նչ հաստոցների միջոցով են ստանում տեսակավոր գլանվածքը.

- 1) կոման
- 2) գլոցման
- 3) դրոշմման
- 4) ձուլման

29

Ի՞նչ է չափանշումը.

- 1) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի անցկացման գործողությունը
- 2) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի մշակման ենթակա եզրագծերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը
- 3) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի և մշակման ենթակա տեղամասերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը
- 4) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի արտատպման գործողությունը

30

Ի՞նչ մետաղների համաձուլվածք է արույրը.

- 1) պղնձի և անագի
- 2) պղնձի և բրոնզի
- 3) պղնձի և ցինկի
- 4) պղնձի և կապարի

31

Թուջ կոչվում է այն համաձուլվածքը, որում ածխածնի պարունակությունը հավասար է.

- 1) 2,14 % -ից մինչև 6,67%
- 2) 1,14 % -ից մինչև 5,67%
- 3) 2,12 % -ից մինչև 6,67%
- 4) 1,12 % -ից մինչև 5,67%

32

Պողպատների ջերմամշակման հիմնական տեսակներն են.

- 1) թրծումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը
- 2) թրծաթողումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը
- 3) թրծաթողումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը
- 4) թրծումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը

33

Մեկ դյույմը հավասար է.

- 1) 20,5 մմ
- 2) 24,5 մմ
- 3) 21,4 մմ
- 4) 25,4 մմ

34

Փակնագործական մետաղապողոցի սոցաժապավենը շրջանակի մեջ տեղադրում են ատամներն ուղղված դեպի.

- 1) անշարժ գլխիկի ուղղությամբ
- 2) բռնակի հակառակ ուղղությամբ
- 3) բույթերը
- 4) բռնակը

35

Հատիչի սրման անկյունը պողպատներ հատելիս հավասար է.

- 1) 90°
- 2) $35^\circ-40^\circ$
- 3) 60°
- 4) $45^\circ-60^\circ$

36

Հատման ժամանակ տարբերում են մուրճով հարվածի հետևյալ տեսակները.

- 1) դաստակային, արմունկային և ուսային
- 2) արմունկային և ուսային
- 3) դաստակային, արմունկային և ազդրային
- 4) արմունկային և ազդրային

37

Խարտոցներն ըստ աշխատամասի 10 մմ երկարության վրա եղած ծրատվածքների թվի լինում են.

- 1) կոպտատաշ, մաքրատաշ, խաչաձև
- 2) կետային, մաքրատաշ, թավշյա
- 3) կոպտատաշ, մաքրատաշ, կետային
- 4) կոպտատաշ, մաքրատաշ, թավշյա

38

Ի՞նչ կտրիչից են օգտվում խառատային հաստոցով աստիճանավոր լիսեռներ մշակելիս.

- 1) կտորահատ
- 2) անցահատ հենակային
- 3) անցահատ ուղիղ
- 4) ենթահատ

39

Նախապատրաստվածքի մեկ պտույտի ընթացքում կտրիչի տեղափոխման մեծությանն անվանում են.

- 1) կտրման արագություն
- 2) հաճախություն
- 3) կտրման խորություն
- 4) մատուցում

40 Մետրական պարուրակների եռանկյուն պրոֆիլի գագաթի φ անկյունը հավասար է.

- 1) 60°
- 2) 90°
- 3) 45°
- 4) 55°

41 Ֆրեզերման ժամանակ մատուցում ասելով հասկանում են.

- 1) ֆրեզի պտտման հաճախականությունը
- 2) կտրման խորությունը
- 3) կտրման արագությունը
- 4) մշակվող նախապատրաստվածքի տեղաշարժը պտտվող ֆրեզի նկատմամբ

42 Ինչպե՞ս են անվանում այն սարքավորումը, որը փոխակերպում է էներգիան, նյութերը կամ տեղեկատվությունը.

- 1) մեխանիզմ
- 2) մեքենա
- 3) դետալ
- 4) աշխատանքի գործիք

43 Ըստ գործողության բնույթի մեքենաները լինում են.

- 1) էներգետիկական
- 2) ստատիկ
- 3) էներգախնայող
- 4) դինամիկ

44 Ո՞ր մեքենան աշխատանքային չէ.

- 1) տրանսպորտային
- 2) էլեկտրաշարժիչ
- 3) փոխադրիչ
- 4) տեխնոլոգիական

45 Էլեկտրական լարումը չափում են.

- 1) ամպերմետրով
- 2) վատտմետրով
- 3) օհմմետրով
- 4) վոլտմետրով

46

Վոլտմետրը էլեկտրական շղթային միացվում է.

- 1) հաջորդաբար
- 2) ամպերմետրից առաջ
- 3) զուգահեռ
- 4) ամպերմետրից հետո

47

Արմատապտղավոր բույսեր են.

- 1) գինձ
- 2) ճակնդեղ
- 3) դդմիկ
- 4) տաքդեղ

48

Հացահատիկային բույս չէ.

- 1) աշորա
- 2) եգիպտացորեն
- 3) բրինձ
- 4) սոյա

49

Մսամթերքի ջերմային մշակումը ո՞ր գործընթացի հիմնական մասն է.

- 1) տեխնոլոգիական
- 2) ֆիզիկական
- 3) տեխնիկական
- 4) քիմիական

50

Բանջարեղենի հիմնական խմբից չէ.

- 1) արմատապտղավոր
- 2) սոխուկավորներ
- 3) պտղաբանջարներ
- 4) արմատաունդավոր

51

Տերևաբանջարների թվին է պատկանում.

- 1) նեխուր
- 2) անխոն
- 3) ստեպղին
- 4) սեզատերև

52 Ո՞ր վիտամինը չի համարվում ճարպալույծ.

- 1) A
- 2) D
- 3) C
- 4) K

53 Ո՞ր վիտամիններն են ամրացնում ոսկորները և լավացնում ինքնազգացողությունը.

- 1) A
- 2) E
- 3) B
- 4) D

54 Վիտամին A պարունակող սննդամթերք չէ.

- 1) ձու
- 2) կարագ
- 3) կիվի
- 4) թուրինջ

55 Շոգեեփն ի՞նչի միջոցով է պատրաստում ուտեստը.

- 1) տապակման
- 2) ծխահարման
- 3) միկրոալիքների
- 4) ջրային բաղնիքի

56 Ի՞նչ է կարվինգը.

- 1) դեկորատիվ ներկում
- 2) ձևավորման արվեստ
- 3) հարմարադրում
- 4) հարմարադասում

57 Պարզ ուսագծային կարվածքի գծագրի կառուցման համար անհրաժեշտ չափս է.

- 1) մեջքի երկարությունը մինչև գոտկատեղ
- 2) սեղմոնների երկարությունը
- 3) ներքին կարի երկարությունը
- 4) սեղմոնի լայնությունը

58 Մեջքի երկարության չափը մինչև գոտկատեղ վերցնում են.

- 1) ութերորդ ողից մինչև գոտկատեղ
- 2) վեցերորդ ողից մինչև գոտկատեղ
- 3) հինգերորդ ողից մինչև գոտկատեղ
- 4) յոթերորդ ողից մինչև գոտկատեղ

59 Ձեռքի շարժաբերով կարի մեքենայի մաս չէ.

- 1) թափանիվ
- 2) սեղմման թաթիկ
- 3) փոկ
- 4) սևեռիչ

60 Հագուստի գոտկային տեսակ չէ.

- 1) տաբատ
- 2) կիսաշրջազգեստ
- 3) անդրավարտիք
- 4) շրջազգեստ

61 Բնական մանրաթելի տեսակ չէ.

- 1) բուսական
- 2) կենդանական
- 3) ացետատային
- 4) հանքային

62 Ըստ պատրաստման հումքի գործվածքները լինում են.

- 1) բնական և քիմիական
- 2) քիմիական և տեխնոլոգիական
- 3) արհեստագործական և կենդանական
- 4) ֆիզիկական և բուսական

63 Ասեղնագործության հիմնական գործիքներից է.

- 1) քարգահ
- 2) թակ
- 3) քարկիթ
- 4) կտուտիչ

64

Ասեղնագործության մեջ օգտագործվող կարատեսակներից չէ.

- 1) թելքաշ
- 2) ճյուղակար
- 3) եղնակար
- 4) շուլալակար

65

Կարպետն ի՞նչով է տարբերվում գորգից.

- 1) զարդանախշերով
- 2) զարդաձևերով
- 3) գեղագարդումով
- 4) թելախավով

66

Կտուտիչը նախատեսված է.

- 1) խավը խուզելու և հավասարեցնելու համար
- 2) գործվածքի շարքերը նստեցնելու համար
- 3) խավը սանրելու համար
- 4) թելը հանգուցելու և կտրելու համար

67

Հայկական գորգի առանձնահատկություններից է.

- 1) կրկնակի հնագույցը
- 2) մեկուկես հանգույցը
- 3) մեկ հանգույցը
- 4) կես հանգույցը

68

Բրդե մանրաթելերի 96%-ը ստանում են.

- 1) ոչխարի բրդից
- 2) լամայի բրդից
- 3) ուղտի բրդից
- 4) այծի բրդից

69

Ըստ կառուցվածքի հագուստները լինում են.

- 1) ուսային և թևքային
- 2) ուսագծային և կոնքային
- 3) ուսային և գոտկային
- 4) գոտկային և կոնքային

70

Ի՞նչ է իրենից ներկայացնում հագուստի պատրաստման ժամանակ կիրառվող ձևանր.

- 1) մեծացված չափերով գծագիր
- 2) տեխնիկական գծագիր
- 3) փոքրացված չափերով գծագիր
- 4) բնական չափերով գծագիր

71

Մասնագիտության ընտրության բանաձևերից ո՞րն է ճիշտ.

- 1) պահանջված է, պետք է, կարող եմ
- 2) ուզում եմ, կարող եմ, պետք է
- 3) պահանջված է, պետք է, ուզում եմ
- 4) ուզում եմ, կարող եմ, հնարավոր է

72

Մասնագիտությունների դասակարգման ո՞ր խմբի ներկայացուցիչները գործ ունեն աշխատանքի անշունչ առարկաների, տեխնիկական միջոցների ստեղծման, մոնտաժի, հավաքման և կարգաբերման հետ.

- 1) մարդ-նշանային համակարգ
- 2) մարդ-կենդանի բնություն
- 3) մարդ-տեխնիկա
- 4) մարդ-մարդ

73

Նախագծի կատարման ո՞ր փուլում է տրվում տնտեսագիտական և էկոլոգիական գնահատական.

- 1) կոնստրուկտորական
- 2) որոնողական
- 3) տեխնոլոգիական
- 4) վերլուծական

74

Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը.

- 1) հասարակության գնողունակության բարձրացման օրինաչափությունները
- 2) հասարակության տնտեսական կյանքի զարգացման օրինաչափությունները
- 3) հասարակության պահանջարկի ձևավորման մեխանիզմները
- 4) հասարակության առաջարկի ձևավորման մեխանիզմները

75

Անձի նյութական կամ հոգևոր պահանջները բավարարելու անհրաժեշտությանն անվանում են.

- 1) եկամուտ
- 2) կարիք
- 3) բյուջե
- 4) շահույթ

76

Ի՞նչ է եկամուտը.

- 1) փող կամ նյութական արժեքներ, որոնք ապահովում են ապրանքների ձեռքբերումը
- 2) ընտանիքի կարիքների բավարարման համար նախատեսված ֆինանսական միջոցներ
- 3) անձի կարիքների բավարարման համար նյութական միջոցների ձեռքբերումը
- 4) փող կամ նյութական արժեքներ, որոնք կարող են լինել աշխատավարձի, պարգևատրման կամ նվերի տեսքով՝ կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց

77

Ո՞ր դեպքում է ընտանեկան բյուջեն հավասարակշռված.

- 1) երբ եկամուտներն ու ծախսերը հավասար են
- 2) երբ եկամուտները գերազանցում են ծախսերին
- 3) երբ ծախսերը գերազանցում են եկամուտներին
- 4) երբ եկամուտները չեն գերազանցում ծախսերին

78

Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը.

- 1) ապրանքների և ծառայությունների վաճառքն է որոշակի գնով, որն ապահովում է շահույթի համակարգված ստացում
- 2) ապրանքների և ծառայությունների ոլորտում բնակչության կարիքների բավարարումը
- 3) պետական բյուջեի համալրումը հարկային եկամուտներով
- 4) նոր մտահղացումների որոնումը

79

Տնտեսավարող սուբյեկտներ կարող են հանդիսանալ միայն.

- 1) ֆիզիկական անձինք
- 2) ֆիզիկական և իրավաբանական անձինք
- 3) իրավաբանական անձինք
- 4) անհատները

Ձեռնարկատիրական գործունեության կարևորագույն հատկանիշներն են.

- 1) նոր գաղափարների մշտական որոնում, ռիսկ, տնտեսական կախվածություն երկրի մակրոտնտեսական իրավիճակից
- 2) ռիսկ և անորոշություն, անկախություն և գործունեության ազատություն, հույս նորարարության վրա
- 3) անկախություն, նորարարության վրա հույս դնելը
- 4) նոր գաղափարների մշտական որոնում